Փ Ո Խ Ը Մ Բ Ռ Ն Մ Ա Ն Հ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը և Հունգարիայի Հանրապետության ազգային զարգացման և էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Կողմեր),

ցանկանալով ընդլայնել Կողմերի միջև երկարատև երկկողմ կապերի վրա հիմնված տնտեսական համագործակցությունը,

առաջնորդվելով նորարարության, ներդրումային, հետազոտական և համատեղ արտադրության ոլորտներում տնտեսական, արդյունաբերական, տեխնիկական և տեխնոլոգիական համագործակցության նոր, փոխշահավետ ձևերի զարգացման և ամրապնդման ցանկությամբ,

գիտակցելով երկկողմ տնտեսական կապերի կարևորությունը,

համաձայն իրենց երկրների օրենքների և կանոնակարգերի, ինչպես նաև իրենց միջազգային պարտավորությունների,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը զարգացնում են համագործակցությունը իրենց իրավասության շրջանակներում գտնվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թեմաների շուրջ՝ Կողմերի միջազգային պարտավորություններին և ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 2

Միջգերատեսչական համագործակցության նպատակն է խթանել հայ-հունգարական տնտեսական հարաբերությունները և զարգացնել համագործակցության նոր ուղղությունները:

Հոդված 3

Կողմերը փոխանակում են տեղեկատվություն և փորձ տնտեսական ոլորտում և խթանում են ներդրումները, համատեղ արտադրությունը, համատեղ հետազոտությունները հատկապես հետևյալ ոլորտներում.

- փոքր և միջին ձեռնարկություններ,
- ներդրումային քաղաքականություն,
- ձեռնարկատիրության զարգացում և կանոնակարգում,
- արդյունաբերություն,
- փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ցանկացած այլ ոլորտ:

Հոդված 4

Անհրաժեշտության դեպքում սույն Հուշագրի նպատակների համար Կողմերը իրենց ներկայացուցիչների միջև կազմակերպում են հանդիպումներ:

Հոդված 5

Սույն Հուշագրի նպատակներն իրագործելու համար Կողմերը խրախուսում են երկու Կողմերի համատեղ գործարար խորհրդաժողովների և սեմինարների կազմակերպումը:

Հոդված 6

Կողմերը միմյանց տեղեկացնում են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ծրագրերի և նախագծերի մշակման և իրականացման մասին:

Հոդված 7

Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման ժամանակ առաջացած ցանկացած վեճ Կողմերը կարգավորում են անմիջական բանակցությունների միջոցով:

Հոդված 8

Սույն Հուշագրի դրույթները չեն ազդում Կողմերից որևէ մեկի՝ ցանկացած այլ միջազգային համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կամ իրավունքների իրականացմանը:

Հոդված 9

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել ցանկացած տեսակի փոփոխություններ և լրացումներ: Այդպիսի փոփոխություններն ու լրացումները ձևակերպվում են սույն

Հուշագրի անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրություններով, որոնք ուժի մեջ են մտնում սույն Հուշագրի 10-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

Հոդված 10

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում դիվանագիտական հայտագրերը փոխանակելու օրվանից, կնքվում է երկամյա ժամկետով և ինքնաբերաբար երկարաձգվում է հետագա երկամյա ժամկետով, եթե Կողմերից ոչ մեկը մյուս Կողմին չի ծանուցում դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին Հուշագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ:

Սույն Հուշագրի գործողության դադարեցումը չի ազդում մինչև դրա գործողությունը լրանալը սույն Հուշագրի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների և (կամ) իրականացվող ծրագրերի վավերականության և տևողության վրա:

Կատարված է Բուդապեշտ քաղաքում 2009 թվականի նոյեմբերի 10-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, հունգարերեն և անգլերեն:

Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտել 2010թ. մարտի 29-ին